ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 947-Ա « 16 » հունիսի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՎԱՀԱՆ ՋԱՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԿՈՒՄԲ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2025 թվականի դեկտեմբերի 19-ի N 5209-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2026 թվականի հունիսի 24-ից մինչև հուլիսի 14-ը ներառյալ «Երևանի Վահան Ջատիկյանի անվան մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2023-2025թթ. ֆինանսական աուդիտ:

2. «Երևանի Վահան Ջատիկյանի անվան մարզակումբ» համայնքային ոչ առևտրային կազ-մակերպությունում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Սեյրան Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետ Արմինե Շահբազյանին և գլխավոր մասնագետի ժ/պ Նելլի Զաքարյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ